ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 42

«18» 05 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 10 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալի 1 թափուր հաստիքը կրճատելու և Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի փետրվարի 10-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 9-ի N 24 ու 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 43 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 10 հրամանով հաստատված 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ բաժնի 17-րդ գլխի 63-րդ կետի «Դատախազության դատախազ 3» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 4» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 8» բառերը՝ «Ընդամենը՝ 9» բառերով,

2) 3-րդ բաժնի 22-րդ գլխի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում՝ 90***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 91***» բառերով,

3) 5-րդ բաժնի 33-րդ գլխի 125-րդ կետի «Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ 4» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի տեղակալ 3», իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 5» բառերը՝ «Ընդամենը՝ 4» բառերով,

4) 5-րդ բաժնի 46-րդ գլխի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 74»*** բառերը փոխարինել ***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 73»*** բառերով,

5) 6-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը՝ 90»*** բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը՝ 91»*** բառերով, իսկ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում դատախազների թիվը՝ 74»*** բառերը՝ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում դատախազների թիվը՝ 73»*** բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ